ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԱՐՄԵՆԱԿ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Դանիելյան,

Ի պատասխան Ձեր 15.11.2024թ. հ. 383-2024թ. գրության՝ Անդրանիկի փողոցի հ.62 շենքին հարակից կոյուղատար խողովակի խցանման վերաբերյալ, տեղեկացվում է.

2017 թվականի հունվարի 1-ից մեկնարկել է ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի ծառայությունների մատուցման Վարձակալության պայմանագիր, որի կողմերն են հանդիսանում Ջրային կոմիտեն՝ որպես Վարձատու և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն՝ որպես Վարձակալ:

Ներկայացված խնդրի կարգավորումը գտնվում է Ջրային կոմիտեի և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի պատասխանատվության ներքո:

Հաշվի առնելով հարցի կարևորությունը, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կողմից միջնորդվել է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ՝ խնդիրն ուսումնասիրելու և կարգավորելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ